


ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF
WESTERN ARMENIA



BATI ERMENİSTAN
CUMHURİYETİ

РЕСПУБЛИКА
ЗАПАДНАЯ АРМЕНИЯ

Հաղորդագրություն

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը հայտնէ Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահին եւ Ֆրանսայի Ժողովուրդին, 14.07.2016-ի երեկոյեան տեղի ունեցած անմարդկային ահաբեկչական ռճիրի ընթացքին անմեղ մարդկային կորուստներու համար:

Ռճիրն ու մարդասպանութիւնը կը դառնան անտանելի եւ անընդունելի երեւոյթ այս երկրագունդի վրայ՝ ծառայելով միայն ու միայն մարդկութիւնէ գերծ եւ խաւարի ձգտող ուժերու անիմաստ եւ բնութեան բոլոր օրենքներու հակադրուած իշխանամոլական ծրագրերուն:

Այս տխուր առիթը կ'ուզայ անգամ մը եւս զգուշացման ահազանգը հնչելու, որպէսզի աշխարհի բոլոր ողջամիտներն ու իմաստուններն անհապաղ լծուին գործի՝ կանխարգելելու ողջ մարդկային քաղաքակրթութեան ակնհայտ եւ արագացող փլուզման ու գահավիժումի գործընթացը:

Մարդկութեան փրկութիւնն ու անվտանգութիւնը անհնար է ապահովել նորանոր պատերազմներով եւ միջազգային ռազմական - քաղաքական լարուածութեան աճող պայմաններու միջոցաւ՝ այլ, կիրառելով միջազգային բոլոր այն որոշումները, օրենքներն ու պայմանագրերը ի միտի ունենալով ողջ մարդկութեան համար ստեղծելու խաղաղ ու ապահով կեանքի պայմաններ, գերծ մենատիրական անիրական ծրագրերէն:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան
Արտաքին Գործերու Նախարարութեան
Լրատուական գրասենեակ

Երեւան 15.07.2016
mfa@warmeniadov.com